Է. Բ. ՄԻՐԱՔՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՄԱՍԻՆ

Կառուցվածքային լեզվաբանության մեջ բառերը ըստ դասերի բաշխելու հիմնական չափանիշը ձևականն է։ Ըստ որում «ձև» բառը այստեղ կիրառվում է լայն առումով. այն ընդգրկում է ինչպես բառի ձևաբանական ձևավորումը, այնպես էլ նրա բաշխումը (дистрибуция), այսինքն բառի դիրքը այս կամ այն կապակցության մեջ, այն շրջապատը, որում կարող է հանդես գալ բառը։ Բառի ձևաբանական ձևավորումը ենթադրում է որոշակի հարացույցի (парадигма) առկայությունը։ Հարացույցի բացակայությունը բառերի այս կամ այն դասում, երբ այն առկա է տվյալ լեզվի մնացած բոլոր դասերում, կարելի է համարել այդ դասի յուրահատուկ զրո ձև։

Հայերենում ածականներն ու մակբայները հարացույց չունեն. ածականների և մակբայների ձևական հատկանիշը անփոփոխելիությունն է[1]։ Այդ հատկանիշով նրանք հակադրվում են մնացած բոլոր դասերին և, համապատասխանաբար, մերձենում են միմյանց։ Այսպիսով, հայերենում գոյություն չունի ածականների և մակբայների տարբերակման ձևաբանական չափանիշ։

Ձևաբանական տեսակետից չձևավորված բառեր գոյություն ունեն ոչ միայն հայերենում։ Հետաքրքրական է ածականների և մակբայների սահմանազատման հարցի նկատմամբ մոտեցումը անգլերենում, ուր դրանք նույնպես անփոփոխ բառեր են[2]։

Հայերենի ածականները և մակբայները սահմանելիս ընդունված է ելնել իմաստից։ Ածականներին և մակբայներին տրվող բոլոր սահմանումները կարելի է ընդհանուր առմամբ հանգեցնել հետևյալին. ածականները ցույց են տալիս առարկայի հատկանիշը, իսկ մակբայները՝ հատկանշի հատկանիշը։ Ածականների գործածությունը հատկանշի հատկանիշ արտահայտելու, իսկ մակբայներինը՝ առարկայի հատկանիշ արտահայտելու համար լեզվաբանների կողմից մեկնաբանվում է տարբեր կերպով։ Օրինակ, Մ. Արեղյանը համարում է, որ «հայերենում... սակավաթիվ բառերի բացառությամբ, մակբայն ածականի գործունեությունն է պարագայական նշանակությամբ»[3]։

Ըստ Է. Աղայանի «ժամանակակից հայերենում... հաճախ, ածականը անփոփոխ ձևով նաև մակբայ է. ինչպես՝ ածական լավ (գիրք), արագ (ընթացք), գեղեցիկ (մարդ), հպարտ (մարդ), խիստ (հայացք), մակբայ լավ (գրել), արագ (գնալ), գեղեցիկ (խոսել), հպարտ (քայլել), խիստ (հանդիմանել) և

---

1 Գ. Սակը ածականը կոչում է թեքվող խոսքի մաս նկատի ունենալով իբրև փոխանուն հանդես եկող ածականը։ Գ. Ս ա կ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 254։

2 Տե՛ս О. Есперсен, Философия грамматики, ИЛ, М., 1958.

3 Մ. Ա ր ե ղ յ ա ն, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 8։

այլն»[4]։ Իսկ Ս. Աբրահամյանը[5] գտնում է, որ բայի հետ գործածվող ածականը մակբայ չի դառնում, այլ մնում է ածական, որը կատարում է ածականի համար մի նոր՝ պարագայական ֆունկցիա։

Իմաստի վրա հիմնվող մոտեցումն առաջ է բերում միանգամայն սուբյեկտիվ հայտարարություններ՝ ինչպես, օրինակ, «Ընդգծված բառերը թեքվում են դեպի մակբայները. նրանց մեջ ավելի շատ շեշտվում է մակբայական, քան ածականական իմաստը»[6]։

Ածականի և մակբայի դասերը հայերենում միակերպ չեն այն առումով, որ հաճախ ավելի շատ շփման կետեր են դիտվում երկու դասերի տարրերի միջև, քան յուրաքանչյուր դասի մեջ։ Այսպես՝ համեմատության աստիճաններ կազմվում են ոչ բոլոր որակական ածականներից, սակայն կարող են կազմվել որոշ հարաբերական ածականներից և մակբայներից։

Ածականների մի մասը հանդես է դալիս մակբայի, մակբայների մի մասը՝ ածականի ֆունկցիայով։ Ածականի լրացման դերում կարող են հանդես գալ ինչպես մակբայները, այնպես էլ ածականները, այսինքն՝ հնարավոր է ինչպես

Մկբ. Ած. Գ.

այնպես և Ած. Ած. Գ.

Հայերենում գոյություն ունեն մակբայներ, որոնք կազմված են ածականներից — (ա)-բեն, — (ա)-բար, — (ա)-պես ածանցների միջոցով։ Սակայն այս ձևի հետ միասին նույն ֆունկցիայով կարող են գործածվել նաև ածականները։ Ստացվում են զուգահեռ կառուցվածքներ.

քաջ կռվել և քաջաբար կռվել,
մեղմ գրկել և մեղմորեն գրկել։

Մենք, իհարկե, հավակնություն չունենք տալու հարցի վերջնական լուծումը։ Այդ բանի համար անհրաժեշտ կլիներ մի հատուկ ավելի ընդարձակ ուսումնասիրություն։ Փորձենք տալ ածականների և մակբայների դասակարգումը կառուցվածքային մեթոդներով։

Անհրաժեշտ են այնպիսի չափանիշներ, որոնք կարող են օբյեկտիվորեն արտահայտել ինտուիտիվ պատկերացումները։ Ձևաբանորեն չձևավորված բառերի համար կարող է այդպիսի չափանիշ լինել միայն բաշխումը։ Բաշխումային վերլուծությունը վեր է հանում լեզվական տարրերի զուգորդելիության մեջ օբյեկտիվորեն գոյություն ունեցող տարբերությունները[8]։

---

4 Է. Աղայան. Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952, էջ 363։

5 Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1959, էջ 22։

6 Հ. Օհանյան, Ածականի և մակբայի հարաբերակցության մասին, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 3, 1962, էջ 62։

7 Մկբ՝ մակբայ, Ած՝ ածական, Գ՝ գոյական։

8 Բաշխումային վերլուծության մեթոդը մանրամասն քննության է առնված հետևյալ աշխատություններում։

Ch. C. Fries, The structure of English, N. Y., 1952.
Z. Harris, From morpheme to utterance, Languages, v. 22, № 3, 1946.
Z. Harris, Methods in structural linguistics, Chicago, 1951.

Ենթադրենք, տրված են հայերենում ածականի և մակբայի դասերը կազմող բոլոր բառերը, բայց չի նշված նրանց պատկանելությունը այս դասերից որևէ մեկին։ Անվանենք այդ ցանկը A դաս։

Անցկացնենք այդ A դասին պատկանող բառերի բաշխումային վերլուծությունը։ Ընդ որում, հիմնական գործողությունը կլինի փորձնական բանաձևերում դատարկ դիրքերի տեղադրումը։ Այսպիսի բանաձևերն են

$$\underset{\downarrow}{_}\ N, \qquad \underset{\downarrow}{_}\ V, \qquad \underset{\downarrow}{_}\ A,$$

ուր գծիկը ցույց է տալիս տեղադրման ենթակա դիրքը, N-ն նշանակում է գոյական, V-ն՝ բայ, A-ն՝ A դասի անդամ, սլաքը ցույց է տալիս դեպի ձախ ուղղված խնդրառությունը (управление)

Տեղադրման գործողությունը կատարվում է մի քանի աստիճանով։

Ամեն մի աստիճանում քննության են ենթարկվում A դասի բոլոր տարրերը։ Տվյալ դիրքը գրավող տարրին վերագրվում է Ai։ Չտեղադրված տարրին ոչինչ չի վերագրվում։

I փուլ։ Դատարկ դիրքի քննությունը $\underset{\downarrow}{_}\ N$ բանաձևում։

Այս դիրքում հնարավոր A դասի տարրերը ստանում են A_1 նշանը։ Տվյալ բանաձևի դատարկ դիրքում տեղադրելու հնարավորությունը փորձարկվում է ստուգողական կապակցություններում։

II փուլ։ Դատարկ դիրքի քննությունը $\underset{\downarrow}{_}\ V$ բանաձևում։

Այս բանաձևի դատարկ դիրքում տեղադրվող տարրերին վերագրվում է A_2 նիշը։ A_1-ի այն տարրերը, որոնք տեղադրվում են նաև այս դիրքում, ստանում են $_2$ ցուցիչը։

Այսպիսով՝ տվյալ փուլում մենք ունենք A_2 և $A_{1.2}$։ Ընդհանուր առմամբ կունենանք 3 տեսակի տարրեր՝ A_1, A_2, $A_{1.2}$։

III փուլ։ $\underset{\downarrow}{_}\ A$ բանաձևի քննություն։ Այդ A դասի տարրերի փոխադարձ զուգորդելիության քննությունն է։ Որպես A բանաձևում կարող են լինել և՛ A_1, և՛ A_2, և՛ $A_{1.2}$, այսինքն բոլոր այն տարրերը, որոնք կարող են դեպի ձախ խնդրառվել գոյականով կամ բայով։

Այսպիսով՝ $\underset{\downarrow}{_}\ A$ բանաձևին համապատասխանում են հետևյալ բանաձևերը.

$$\underset{\downarrow}{_}\ A_1,$$

$$\underset{\downarrow}{_}\ A_2,$$

$$\underset{\downarrow}{_}\ A_{1.2}.$$

Այս բանաձևի դատարկ դիրքում տեղադրվող տարրերին վերադրվում է A_3։ Տվյալ փուլում ստանում ենք

A_3,

$A_{1,3}$՝ այն A_1-ին պատկանող տարրերը, որոնք տեղադրվում են նաև տվյալ դիրքում։

$A_{2,3}$՝ այն A_2-ին պատկանող տարրերը, որոնք տեղադրվում են նաև տվյալ դիրքում։

$A_{1,2,3}$՝ այն $A_{1,2}$-ին պատկանող տարրերը, որոնք տեղադրվում են նաև տվյալ դիրքում։

Այսպիսով՝ A ամբողջ բազմությունը բաժանվում է A_1, A_2, A_3, $A_{1,3}$, $A_{2,3}$, $A_{1,2,3}$ փոխադարձաբար չհատվող ենթադասերի։

Ստացված ենթադասերի լեզվաբանական բովանդակությունը բացահայտելու համար փորձենք կիրառել տվյալ մոդելը հայերենի ածականների և մակբայների ուսումնասիրության նկատմամբ։

Լեզվի նկատմամբ տվյալ մոդելի կոնկրետ կիրառումը ցույց կտա, գոյություն ունե՞ն արդյոք լեզվում դեդուկտիվ ճանապարհով ստացված բոլոր այդ դասերը։ Հնարավոր է, որոշ դասեր կմնան դատարկ։ Ցույց տալու համար, թե ինչպես կարելի է տվյալ մեթոդի օգնությամբ դասակարգել հայերենի ածականներն ու մակբայները, վերցնենք ածականների և մակբայների մի փոքր խումբ և փորձենք տեղադրել դրանց փորձնական բանաձևերի դատարկ դիրքերում վերը նշված ձևով։ Այսպիսով, անցնում ենք ուսումնասիրության էմպիրիկ մակարդակին։

Ելակետային իրադրությունը հետևյալն է։ Ցուցակով տրված են ածականներ և մակբայներ առանց ճշտելու, թե որ դասին են նրանք պատկանում։ Ցուցակը ծավալով մեծ չէ։ Այստեղ ընդգրկվում են ածականներ և մակբայներ, ընդ որում, հնարավորին չափ հաշվի է առնվում բոլոր տեսակի տարրերի ընդգրկման անհրաժեշտությունը։

Քննությունը, մոդելի համաձայն, անց է կացվում 3 աստիճանով։ Համարվում է, որ A դասի տարրը տեղադրվում է դատարկ դիրքում, եթե այն կազմում է լեզվում թույլատրված շարույթ գոնե մեկ գոյականի, բայի կամ A դասի որևէ տարրի հետ։

1 փուլ։ Ամբողջ ցանկը քննարկվում է ըստ $\overline{\downarrow \quad |}$ N բանաձևի, որի դատարկ դիրքը գրավող տարրերին վերագրվում է A_1։

Այսպիսով A դասը ստանում է հետևյալ տեսքը[9]։

1. ավելի A_1	7. երանելի A_1	13. մուգ A_1
2. արագ A_1	8. հայ A_1	14. շատ A_1
3. արագորեն	9. հին A_1	15. սոսկ
4. արտաքուստ	10. մայրական A_1	16. վարժ A_1
5. գեղեցիկ A_1	11. մանկուց	17. տեղնուտեղը
6. դառը A_1	12. մեծ A_1	18. օրեցօր

9 Այսուհետև կրկնությունից խուսափելու համար բառերի փոխարեն կտրվի միայն համարների թվարկում։

Ստուգողական կապակցություններ

1. ավելի եռանդով
2. արագ զարգացում
5. գեղեցիկ կին
6. դառը ժպիտ
7. երանելի հասակ
8. հայ ժողովուրդ
9. հին լեզու
10. մայրական սեր
12. մեծ երգիչ
13. մուգ կապույտ
14. շատ մարդիկ
16. վարժ ձեռագիր

II փուլ։ Քննության է առնվում A դասը ըստ — V բանաձևի դատարկ դիրքում տեղադրման։

Տարրերին վերագրվում է A_2։ Այդ բանի հետևանքով վեր է հանվում ոչ միայն A_2 նոր ենթադասը, այլև A_1 ենթադասի որոշ տարրեր կազմում են մի նոր $A_{1.2}$ ենթադաս։

1. $A_{1.2}$	7. A_1	13. A_1
2. $A_{1.2}$	8. A_1	14. $A_{1.2}$
3. A_2	9. A_1	15. A_2
4. A_2	10. A_1	16. $A_{1.2}$
5. $A_{1.2}$	11. A_2	17. A_2
6. $A_{1.2}$	12. A_1	18. A_2

Ստուգողական կապակցություններ

1. ավելի ուժեղանալ
2. արագ զարգանալ
3. արագորեն պատմել
4. արտաքուստ վիրավորվել
5. գեղեցիկ պարել
6. դառը ծիծաղել
11. մանկուց դժբախտանալ
14. շատ լավ
15. սոսկ զրախոսել
16. վարժ կարդալ
17. տեղնուտեղը մնալ
18. օրեցօր աճել

Երրորդ փուլի հետևանքով ստացվում են $A_{1.3}$, $A_{2.3}$, $A_{1.2.3}$ նոր դասերը, որոնք վեր են հանվում հիմնական դասից — A բանաձևի դատարկ դիրքում տեղադրվելու ունակության հիման վրա։

1. $A_{1.2.3}$	7. $A_{1.3}$	13. $A_{1.3}$
2. $A_{1.2}$	8. A_1	14. $A_{1.2.3}$
3. A_2	9. $A_{1.3}$	15. $A_{2.3}$
4. $A_{2.3}$	10. A_1	16. $A_{1.2}$
5. $A_{1.2.3}$	11. $A_{2.3}$	17. A_2
6. $A_{1.2}$	12. A_1	18. A_2

Ստուգողական կապակցություններ

1. ավելի լավ
4. արտաքուստ անտարբեր
5. գեղեցիկ վարգագույն
7. երանելի կարմիր
9. հին հայերեն
11. մանկուց շար
13. մուգ կապույտ
14. շատ երջանիկ
15. սոսկ բարի

Այսպիսով՝ փորձնական բանաձևերի դատարկ դիրքերում տեղադրվելու հետևանքով A դասը կազմող ածականների և մակբայների ամբողջ բազմությունը բաժանվում է միմյանց փոխարինող տարրերի փոխադարձաբար չհատվող ենթադասերի, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է մեկ կամ մի քանի ընդհանուր բանաձևերով։

A_1 ենթադասը ընդգրկում է 8, 10, 12 բառերը։

A_2 ենթադասը ընդգրկում է 3, 17, 18 բառերը։

$A_{1,2}$ ենթադասը ընդգրկում է 2, 6, 16 բառերը։

$A_{1,3}$ ենթադասը ընդգրկում է 7, 9, 13 բառերը։

$A_{2,3}$ ենթադասը ընդգրկում է 4, 11, 15 բառերը։

$A_{1,2,3}$ ենթադասը ընդգրկում է 1, 5, 14 բառերը։

Այսպիսով՝ A դասը բաժանվում է 6 ենթադասի։

Ստացվում է ավելի հատվածային բաժանում քան ածականների և մակբայների բաժանումը։

Ստացված դասերը տարբերվում են ընդլայնման հնարավորության տեսակետից։ Այսպես՝ A_1 ենթադասը կարող է ավելի հեշտ ընդլայնվել, քան A_2 ենթադասը, իսկ $A_{1,3}$ ենթադասն այս առումով բավական սահմանափակ հնարավորություններ ունի։

Պարզվեց, որ A_3 դասը դատարկ դաս է։ Հավանաբար հետագա ուսումնասիրությունները կճշտեն վերը բերած ստորաբաժանումը։ Հնարավոր է, որ բանաձևերի թիվը կմեծանա, եթե ավելի մանրամասնաբար հաշվի առնվեն ածականի և մակբայի դիրքերը, օրինակ, որոշ ածականների խնդրառությունը։ Այս տեսակետից մեր կողմից ստացված որոշ ենթադասեր դարձյալ կստորաբաժանվեն և կհայտնաբերվեն նոր ենթադասեր։ Ցուցակն ընդլայնելու հետ մեկտեղ կփոխվի նաև ենթադասերի քանակային փոխհարաբերությունը։ Հնարավոր է, որ կգտնվեն այնպիսի բառեր, որոնք կգետեղվեն ենթադասում։

Բազմակի լրացումներն ու վերափոխումները անխուսափելի են։ Տվյալ աշխատությունը լոկ առաջին քայլն է այդ ուղղությամբ։

Սակայն դասերը դարձյալ կմնան դասեր, որոնց տարրերը միավորված են բաշխման օբյեկտիվ չափանիշի հիման վրա։

Քանի որ պարզվեց, որ A_3 դասը դատարկ է, ապա — A բաշխումը հավանաբար, երկրորդային է։ Ուստի A_1, A_2, $A_{1,2}$, $A_{1,3}$, $A_{2,3}$ և $A_{1,2,3}$ ենթադասերը կարելի է միավորել A_1, կամ $A_{1,2}$, կամ $A_{2,3}$ հատկանիշի առկայության հիման վրա։ Ստացվում են դասեր, որոնք ընդգրկում են.

I. A_1 և $A_{1,3}$։ Այս դասը բնութագրվում է — N բանաձևով։

II. A_2 և $A_{2,3}$։ Այս դասը բնութագրվում է — V բանաձևով։

III. $A_{1,2}$ և $A_{1,2,3}$։ Այս դասը բնութագրվում է — N և — V բանաձևերով։

Առաջին ընդլայնված դասն անվանում ենք ածականների դաս (Ած), երկրորդը՝ մակբայների (Մկբ), երրորդը՝ ածական-մակբայների (Ած-Մկբ) դաս։ Ստացված դասերը բաշխումական դասեր են։

Այսպիսի ընդլայնումը ելնում է խնդրառությունից։

Ստացված վեց ենթադասերը կարելի է դասակարգել նաև ելնելով բառերի դասավորությունից։

Բառի տեղը, այն անվանենք դասի կարգ (разряд), որոշվում է խնդրառությամբ միմյանց հետ կապակցված միավորների փոխադարձ դասավորության հիման վրա։ Դասավորության տեսակետից նշված 6 ենթադասերը հակադրվում են այնպես, որ 1 և 2 հատկանիշները կրող դասերը հանդիսանում են մեկ կարգի դասեր, իսկ 3 հատկանիշ կրողը՝ մյուս կարգի դաս։

1 և 2 հատկանիշները կրող դասերը կազմում են 1-ին կարգի դասը։ 3 հատկանիշը կրող դասերը դիրք են գրավում 1-ին կարգի դասերից առաջ և, համապատասխանաբար, կազմում են 2-րդ կարգը։

Այսպիսով, բառերի դասավորության տեսակետից ունենք.

1-ին կարգ, որը ընդգրկում է A_1, A_2, $A_{1.2}$ ենթադասերը։

2-րդ կարգ, որը ընդգրկում է $A_{1,3}$, $A_{2,3}$, $A_{1,2,3}$ ենթադասերը։

Խնդրառության հիման վրա ստացված ենթադասերի արտապատկերումը դասավորության կարգերի կհանգեցնի հետևյալ դասակարգմանը։

Ած. դասը, որը բաղկացած է A_1 և $A_{1,3}$-ից, ստորաբաժանվում է.

Ած$_1$՝ 1-ին կարգի ածականներ (A_1),

Ած$_2$՝ 2-րդ կարգի ածականներ ($A_{1,3}$)։

Մկբ. դասը, որը բաղկացած է A_2 և $A_{2,3}$-ից, ստորաբաժանվում է,

Մկբ$_1$՝ 1-ին կարգի մակբայներ (A_2),

Մկբ$_2$՝ 2-րդ կարգի մակբայներ ($A_{2,3}$)։

Ած Մկբ դասը, որը բաղկացած է $A_{1,2}$ և $A_{1,2,3}$-ից, ստորաբաժանվում է.

Ած Մկբ$_1$՝ 1-ին կարգի ածական-մակբայներ ($A_{1,2}$),

Ած Մկբ$_2$՝ 2-րդ կարգի ածական-մակբայներ ($A_{1,2,3}$)։

Э. Б. МИРАКЯН

ОБ ОДНОМ СПОСОБЕ КЛАССИФИКАЦИИ ПРИЛАГАТЕЛЬНЫХ И НАРЕЧИЙ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Резюме

Основным критерием распределения бесформенных слов (каковыми являются прилагательные и наречия в армянском языке) в структурной лингвистике является дистрибуция. Проводится дистрибутивный анализ

класса А, в который объединены непроизводные прилагательные и наречия армянского языка. Основной операцией при этом является замещение пустых позиций в диагностических формулах $\overset{\downarrow}{\text{—}}\ \overset{\frown}{\text{N}}$, $\overset{\downarrow}{\text{—}}\ \overset{\frown}{\text{V}}$, $\overset{\downarrow}{\text{—}}\ \overset{\frown}{\text{A}}$ (тире—пустая позиция, N-существительное, V—глагол, А—член класса А, стрелка—направленное влево управление). Операция замещения проводится в 3 этапа. На первом этапе элементы класса А, которые возможны в пустой позиции формулы $\overset{\downarrow}{\text{—}}\ \overset{\frown}{\text{N}}$, получают характеристику A_1.

На II этапе имеем A_2 (те, которые замещают пустую позицию $\overset{\downarrow}{\text{—}}\ \overset{\frown}{\text{V}}$) и $A_{1.2}$ (те из A_1, которые возможны и в данной позиции). На III этапе получим новые подклассы A_3, $A_{1.3}$, $A_{2.3}$, $A_{1.2.3}$. Таким образом, все множество А делится на непересекающиеся подклассы A_1, A_2, A_3, $A_{1.2}$, $A_{1.3}$, $A_{2.3}$, $A_{1.2.3}$.

При конкретном приложении данной дедуктивной модели к языку класс A_3 оказался пустым. Отсюда, $\overset{\downarrow}{\text{—}}\ \overset{\frown}{\text{A}}$ дистрибуция считается вторичной, и полученные подклассы объединяются по наличию признака $_1$ или $_2$ или $_{1.2}$. Получаются укрупненные подклассы:

A_1, $A_{1.3}$ — назовем его классом прилагательных (П).

A_2, $A_{2.3}$ — класс наречий (Н).

$A_{1.2}$, $A_{1.2.3}$ — класс прилагательных—наречий (ПН).

Классы П, Н, ПН являются дистрибутивными классами.

Полученные 6 подклассов с точки зрения порядка противопоставляются по наличию — отсутствено признака$_3$. Классы, не включающие$_3$, составляют классы I разряда, с признаком$_3$ (II разряд) — занимают позицию перед классами первого разряда.

Отображение классов, полученных исходя из управления, на разряды порядка даст следующую классификацию:

$П_1$ — прилагательные I разряда (A_1),

$П_2$ — прилагательные II разряда ($A_{1.3}$),

$Н_1$ — наречие I разряда (A_2),

$Н_2$ — наречие II разряда ($A_{1.3}$),

$ПН_1$ — прилагательное—наречие I разряда ($A_{1.3}$),

$ПН_2$ — прилагательное — наречие II разряда ($A_{1.2.3}$).